

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rev. Pere G. Kalemkarian Mechitaristengasse
Nº 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուշկարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆՆԻՒՆՆԻՒՆ ՎՃԱՐՆԵԼԻ

Նամակ դրամ եռայլն դրկեղ հետեւեալ հասցեով
ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԻՐԱՎՈՒՆԿԻ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).
Rédaction du journal
„Iravounek“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դասաւոր-
մանը միայն կը հրատարակուին անպո-
ղովիկ կամ մասամբ:
Խմբագրութեան տղը 20 տարեկան երե-
քեկ անէրի անգամներու համար 20 0/0
զեղչ կը լինի, փոխարեւը կանխիկ:

ԴԱՐԱՎԵՐՁԻԿ ԿԱՏԱԿՆԵՐ

Ներկայ դարուս այս վերջինքա-
նորդը Ռուսոյ թուրք պատերազմէն
ի վեր լայնածաւալ թատերաբեմ
մը ունեցաւ ճաճկահայաստանը:
Թրքական տիրապետութեան սկիզ-
բէն այդ երկրին մէջ խուլ հալա-
ծանաց ենթարկուած հայ ժողո-
վուրդը 1876-7 թ. պատերազմին
ակնատեսն ըլլալով ռուսական բա-
նակէն Պայազլիտի, Գարսի եւ վեր-
ջագէս Կարինի յաջորդաբար գը-
րաւումին, պահ մը ինքզինքը
տեսնել կարծեց ապատուած թըր-
քական դարաւոր բռնութենէն եւ
հասած աղաւաղութեան հրուանդանը:
Հայ զօրապետներ, Լորիս Մելի-
քեօֆ, Տէր Ղուկասօֆ, սպաններ եւ
զինուորներ յաղթական սուրբերին
գետինը քսելով, իրենց դէմ ելած
հայերն կ'ողջագուրէին եւ կ'աւետե-
ին թէ այլ եւ ճաճկահայոց բաղ-
դը վերակենդանացած է: Ամեն
հայ անհատի դէմքին վրայ կը
նշարուէր հրճուանք եւ ցնծութիւն:
Բայց աւա՜ղ, խաբուսիկ երազ:
Մի քանի ամիս վերջ ամեն բան
փոխուած էր, Ռուս բանակն Կա-
րինէն քաշուած, Սան Սթեֆա-
նօի դաշնագիրը չուրը ինկած,
միմիայն մէջտեղ կը դրուէր Պէր-
լինի չոր ու ցամաք 61րդ. յօդ-
ուածն որ իբր թէ սահմանուած
էր Հայոց վիճակը բարեփոխելու:
Խոստում մը Սուլթանէն, վեց
մեծ պետութիւններէն երաշխա-
ւորեալ. սա դարավերջիկ կատակեր-
գութեան առաջին արարուածն էր:
Այս 61 յօդուածն էր որ գլխա-
ւոր դրդապատճառ մը եղաւ թուր-
քին վճռապէս որոշելու ինչ տար-
քը չնկեղ Հայաստանէն:

Այն օրէն սկսեալ թուրք կա-
ռավարութիւնը իր սոյն որո-
շում կամ ծրագիրը սկսեց գոր-
ծադրել մեզմիկ եւ տակաւ առ տա-
կաւ, որոյ գլխաւոր մի հետե-
ւանքն էր ինքնաշարժ հեծելազորին
կազմակերպութիւնը, որով Սուլ-
թանը պարզապէս ծաղրեց պե-
տութիւնները, զի դաշնագիրը կը
տրամադրէր անգէն եւ հալածիւ
հայերն Քրդաց եւ Զէրքէզներու
դէմ պաշտպանել, մինչդեռ կա-

ռավարութիւնը Քրդերն կը զի-
նէր հայոց դէմ. սա լիբր կատակ
մը էր:

Սանտոյ 1894 թ. կոտորածով երբ
ամբողջ աշխարհ յուզուեցաւ եւ
բեք մեծ պետութիւնք ստիպուե-
ցան պատրաստել 1895 Մայիս
11 թ. ծրագիրը, որով հայաբնակ
վեց նահանգներու նոր կազմակեր-
պութիւն պիտ' ըլլար. Սուլթանը
ամեն դժուարութիւն հանեց զայն
չվաւերացնելու համար, եւ յայտա-
բարեց թէ՛ եթէ ինք ընդունի իս-
լամ ժողովուրդը պիտի գրգռուի:
Բացարձակ միապետական երկրի
մը վեհապետին այս յայտարարու-
թիւնը իր ժողովուրդը հովուելու
անկարողութիւնը խոստովանել կը
նշանակէր. այս ալ կատակ մը էր
եւ միանգամայն պատրուակ մը:
Ինչ որ մերկա պարանոց դուրս ե-
կաւ յանկարծ ընդհանուր ջարդե-
րու սկսելով. ջարդեր, որք սխա-
ղեմաբար կերպով կսկսուէին, յայ-
տարար նշանները կառավարու-
թեան պաշտօնատէրէն տրուելով
եւ խուժանը «տէվլէթտէն էմիր
վար պիւթիւն կեափուրարը քե-
սէճէկիդ» աղաղակելով: Բայց
խուժանին այս գրգռուած պա-
հուն իսկ կառավարութիւնը ցոյց
կուտար իր կարողութիւնը զանոնք
զսպելու մէջ, զի որոշեալ ժամը
վարկենապէս կը դադարեցնէր յար-
ձակումը եւ իսկ մը դիակներ ալ ու-
տիկանատուններէն դուրս կը նետ-
ուէին: Այս ընդհանուր խժգը-
ծութեանց իբր բացատրութիւն
Դուռը դեսպաններուն կըսէր «Իս-
լամ ժողովուրդը գրգռուեցաւ եւ
մենք հազիւ կարողացանք զսպել»
ու թիւն տակէն կը խնդար վար-
պետուկ կատակողի մը պէս:

Կոտորածներէն վերջ հաղարա-
ւոր եկեղեցիներ, վանքեր ու վար-
ժարաններ մինչ այրած եւ աւերած
կը մնային, կառավարութիւնը ե-
լաւ կանգուն կեցած մզկիթներուն
վերաշինութեան համար հանգա-
նակութիւն ընել. այս ալ ամբողջ
Քրիստոնեայ աշխարհը հեզնող
կատակ մը էր:

Պօլսոյ 1896 օգոստոսի ջարդը
որ պանգոյի ցոյցին վերադրուած
է, ապացոյցներով տեսնուեցաւ թէ

ոստիկանութեան նախարար Նա-
զըմի միջոցաւ կանխապատրաստ
ուած էր: Դուռը այս կատակի-
ալ քաղաքակրթեալ աշխարհի կը-
լեցնել փորձեց. բայց դեսպանք
ակնատեսն ըլլալով, քաղութիւն ու-
նեցան հաւաքաբար Դրան յայտա-
բարելու թէ այս ջարդը կառա-
վարութիւնը պատրաստած էր, ինչ-
պէս որ մէկ հրամանով մ'ալ վայր-
կենապէս դադարեցուց. եւ իրօք
դեսպանք այս կատակը կլլած չէին:

Ահա այսօր, ջարդէն երկու տա-
րի վերջ, դեսպաններն իրենց հը-
պատակաց ֆլանսներն կը պահան-
ջեն եւ Դուռը կուզէ կրկին կատա-
կել ըսելով թէ «դէպքին հեղի-
նակներն փնտուցէք եւ ես ալ ձեռ-
հետ կը պահանջեմ անոնցմէ իս-
լամ ժողովուրդիս ֆլանսներն»: Ինչ
անհամ կատակ:

Ռուս կառավարութիւնը կը պա-
հանջէ որ կողմէս գաղթող հա-
յերն ճաճկաստան ընդունուին եւ
իրենց սեփական կալուածներն ետ
տրուին, Դուռը զայս կը մերժէ
առարկելով թէ «այդ կալուածնե-
րուն իսլամները տիրացած են, եւ
թէ անոնցմէ ետ ուզուի խռովու-
թիւնը կը վերսկսի»: այս պատ-
րուակին ի հաստատութիւն Բաղե-
շի նահանգին մէջ նորանոր կոտո-
րածներ ընել կուտայ եւ իր հին
քոսոտած սիստէմը ձեռք կառնէ
ու առաջնակարգ հայերէն ստորա-
գրութիւններ հաւաքելով խնդրել
կուտայ ռուս կառավարութեան
որ գաղթականներն ճաճկաստան
չի գան: Ահա այս ալ Դրան ան-
համ կատակն է:

Արդեօք Եւրոպան այսպէս բիրտ
եւ անհամ կատակներուն ընդ երկար
հանդիսատես պիտ' ըլլա՞յ թէ ոչ:

Պիտի ջանանք այս հարցին պա-
տասխանել ուրիշ յօդուածով մը:
Թ. Գ.

ՊՈՒԼԿԱՐԱՅՈՑ ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Այս էջերու մէջ ուրիշ յօդուա-
ծով մը խօսուեցաւ արդէն անցո-
ղակի՝ թէ կեդրոնական կոչուած
ուսումնական խորհուրդները եւ
կամ ատանկ տասնեակ խորհուրդ-
ներու մըլտած որչընդ—Պատրիար-

քարան—հակառակ իր շարակն ա-
ռած ծովածաւալ պարտականու-
թիւններուն, կրթական միակ փըր-
կարար, միակ նուիրական հարցին
ի նպատ ոչինչ չէ ըրած դրապէս,
իրականացնելու համար այն անուշ
երազները, որով օրօրուեցանք սահ-
մանադրական հասուն տարիքի մը
քառորդ դարէ շատ աւելի երկար
չըլանի մը մէջ:

Շատեր եկան գացին, շատ խոր-
հուրդներ իրար յաջորդեցին ու
յաճախ յիմար ծափերով ողջուն-
ուեցան ատոնք: Ինչո՞ւ, որովհե-
տեւ Դուռ-Գարուի խարխուլ չէն-
քը մինչեւ բերան լեցուցին ծրագ-
րի դէպքով եւ թղթէ գրեթէ մը
չինքնին, ինչ կըսեմ, լեռ մը հը-
րէշագործեցին ու ժողովուրդին
դահիճները ըլլալով հանդերձ, ժո-
ղովուրդին ծափը պահանջեցին...
ու վայելեցին: Վասն զի պէտք էր
արդարացնել «Որդի օրինաց»ին
այն նշանաւոր վճիռն որ կըսէ
«մարդիկ կամ ժողովուրդներ այն
վիճակը կունենան, որուն արժա-
նի են իրենք»:

Թուրք ոստանին մէջ կեդրոնա-
կան ուսումնական խորհուրդներուն
գոյութիւնը հաստատող է՛ն առաջ-
նակարգ ու է՛ն փայլուն երեւութե-
անքն եղան միայն ու միայն կըր-
թական ծերուկ տեսչի մը հոս ու
հոն աննպատակ ու թափառկոտ
այցելութիւնները եւ վարժապետ-
ներուն տրուած աժանագին վկա-
յականները ու նոյնքան աժանա-
գին վաւերացումները ամեն կար-
գի դասագրքերու. իսկ գաւառ-
ներու համար այսքան ալ նշանա-
կութիւն չունեցան եւ շատ հեղ-
անոնց ծնունդն ու մահը մէկ տեղ
լսեցին խեղճ գաւառացիները:

Ուրեմն երբ ատոնք՝ այսքան ա-
մուլ, այսքան տխմար ուստոստում-
ներով, նոյն իսկ իրենց անմիջա-
կան հսկողութեան յանձնուած
թրքահայոց կրթական վիճակը
բերին հասուցին քառսի մը, ուր
ահաւասիկ սերունդներ կը խամ-
րին եւ հասարակական ամեն կար-
գի գործեր ամեն օր կը վտան-
գուին իմաստակներու վիթխարի
բանակէն, ալ ինչ կարող ենք յու-
սալ արտասահմանի հայերուն հա-
մար, որոց ոչ բարձր, ոչ միջա-

վայրին պէտքերը և ոչ ալ տիրող տարրին օրէնքները ուսումնասիրած են :

Շատ հեղ կրկնուած այս պարագան անգամ մըն ալ կը շեշտենք զօրեղապէս, որպէս զի ան դառնալի կերպով երես դարձունք Ուսումնական խորհուրդը կուտուած խրտուիլակէն, հոգ չէ՛, որ իր փողհարները՝ իր պաշտօնական ըսուած անպէտ հրահանգները բզզան շարունակ մեր ականջներուն անամօթաբար : Իր գոյուլթեան փառքը իր գերեզմանային լուծեան մէջ միայն ծափելի թող ըլլայ մեզ համար, ցո՛րչափ իր տարրին մէջ չը գտնուիր ինք ու բան մը չէ և բան մըն ալ ըլլալիք չունի :

Եւ սակայն Ուսումնական խորհուրդէն իրաւամբ երես դարձուցած ատեննիս, մեզ կը մնայ աւելի ամփոփուիլ, ու գուրգուրալ հարցին վրայ որ՝ տարակույս չկայ թէ շատ կենսական է :

Պուկարահայոց կրթական վիճակը այնքան արգահատելի է, որ իր ամբողջութեամբ ուղէ չուղէ արաբական նշանաւոր թանապուրը կը յիշեցնէ մեզ : Ամէն տեսակ ընդհանրանքու խառնուրդն է, որ կը բարձրացնէ այդ թանապուրին արժէքը, ինչպէս ամէն տեսակ քմահաճոյքներու իշխողութիւնն է, որ կը կառավարէ մեր կրթական գործը :

Հոս տեսակ մը ծրագիր ու հոն տեսակ մը հոս թաղականին, հոն

հոգաբարձուին . հոս վարժապետին ու հոն տնօրէնին եւն ու քննաւանձոյքն է, որ կ'իշխեն բացարձակապէս, առանց գոնէ բարոյական համարադրութեան մը վախ՛ն ալ ունենալու : Մատաղ սերունդին ձեռքէն բռնած ուղած տեղերին կ'առնեն կը տանին, ամենքն ալ անպայման կորուստի մատնելով . ո՛ւր կը տանիք պոռագող չը կայ . զի ժողովուրդի ամենէն զօրաւոր ձայնը՝ լրագրութիւնը ուրիշ աւելի կարեւոր զբաղումներ ունի . անձնական ստոր հաշիւներու զբաղումը :

Ու այս ամէնը կը կատարուի այն տեսակ երկրի մը մէջ, որուն տիրող տարրը՝ օրը օրին ջերմեւանդ հետեւող մը եւրոպական զարգացումին, իր զգալի յառաջդիմութիւնով տհազին անջրպետ մը կը բանայ իր և իր հպատակ հայուն մտաւորական կացութեան միջեւ :

Այո՛, երկու տասնեակ տարիներէ ի վեր, ուր Պալքանեան թեւակողիին մէկ կարեւոր մասին վրայ պուկարական ազատ դրօշը ծածանեցաւ, Պուկար ազգը՝ իշխանէն սկսեալ մինչեւ յետին քաղաքացին ոչինչ չանք չը խնայեց հրաշալի ոստումներով կարելու ճանապարհը, զոր գոյած էին իր առջեւ թուրք բռնակալութեան հետ ճիշդ մերիներուն նման ազգպաշտօնական կոչուած խրտուիլակ մարմիններու և չօրպաշտներու բոլրոսած հոգին : Անոնք չը նայելով իշխանապետութեան դրամական անձկութիւններուն, ուտել ու սնա-

նելու բնական հարկի մը պէս վերաբերուեցան իրենց կրթական խնդրոյն և առաջին օրէն որոշեցին իրենց ընթացքը յարմարցնել տիեզերական ընդհանուր յառաջացումին : Պարտք ըրին, խաւաճ ըրին ու երկիրը օժտեցին ձգտումներով՝ զորս կ'արժէ հիացմամբ ու նախանձով արձանագրել այս տողերուն մէջ :

Բայց թէ այդ ընդհանուր զարգացումին մէջ Հայերն ի՞նչ ըրին, ի՞նչ իրաւունքներ կը վայելէին, ի՞նչպէս գործադրեցին զանոնք և ի՞նչպէս վերաբերուեցան դէպի իրենց կենսական գործը, դա կարեւոր հարց մ'է, որուն կը դառնանք մենք ուրիշ անգամներ :

Տ.

ՌՈՒՍԱՃՈՒՔԻ ՏԵՕՐԷՆԸ

Յաւօք կարտատպենք Սօֆիա հրատարակուող Նաթուրա Չալտիքա պուկարական թերթին յուլիս 19 թիւէն հետեւեալ հատուածը, զոր իր Ռուսուգի թղթակիցը գրած է :

«Քաղաքիս Հայերէն շատերը կը բողոքեն տեղւոյս վարժարանի տնօրէն Պ. Կիւրեղեան, Սպասհ Գիւլեանի դէմ, որ շատ կոշտ կը վարուի դաստիարակելու համար իրեն յանձնուած աշակերտաց հետ. եւ զանոնք կը ծեծէ եղբր յաճախ. բան մը որ խստիւ արգիւտած է վարժարանաց ներքին կանոնագրով : Նոյն Տնօրէնը մի քանի աշակերտաց զուլանները պատուած ու թե-

ւերը կոտրած է : Արդէն իրեն դէմ դատ բացուած է Գ. հաշտարար դատարանի առջեւ թիւ 173/98տ. : Դատավարութիւնը տեղի պիտի ունենար յուլիս 11 ին, բայց ամբաստանեալին պաշտպանը պահանջեց որ դատը յետաձգուի, որպէս զի կարող ըլլայ ամբաստանեալին անմեղութիւնը հաստատող վկաներ բերելու : Այս դատին մէջ յիշեալ Տնօրէնը ամբաստանուած է Տեղեւմաք Ս. Թիւթիւնճեան առաջագոյնեայն գլխուն զարկած ըլլալուն համար : Ամբաստանեալը թրքահպատակ է և կալուած ու հաստատ բնակավայր մ'ալ չունենալով, միտք ունի եղբր քաղաքէն հեռանալ, որուն դէմ միջոցներ ձեռք չեն առնուած որ մինչեւ դատին վճռուին չհեռանայ : Դատախազին այս մասին ըրած պահանջը անյսկի մնաց, որովհետեւ դատաւորը խնդիրը անձնական ներկայացնեց : »

«Վարժարանաց Հոգաբարձութեան և Ընդհանուր Տնօրէն (էնս. բէթթէօր) լուրջ ուշադրութիւնը կը հրաւիրենք որպէս զի հետաքրքրին և ուսումնասիրեն այս տնօրէնի վարքը, ու միջոցներ ձեռք առնեն զինքը ուղղելու համար, որպէս զի այդ տեսակ դատապարտելի և վարժարանի անուր ու կոչումը անարգող օրինազանց ընթացից առաջն առնուի» :

Պուկար թերթին սոյն հրատարակութիւնը արտատպելով մեր միակ նպատակն է խնդիրը Ռուսուգի Պատ. թաղ. խորհրդոյ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

(3)

Շնորհիւ աւատականութեան, երկիրը անընդհատ խռովութեան, ըմբոստութեան և ապստամբութեան մէջ է, որի համար բոլոր սարքաղները ամբողջ տարւոյ ընթացքին մէջ հանգիստ եւ դադար չունին. կրիայի արագութեամբ կը հասնին անդ, ուր կայ խռովութիւն և անկարգութիւն, իւրաքանչիւրն իր միջնադարեան ծանր հրացանը իր սարքով (իր սեփական էջի վրայ բարձած իր պաշարի հետ, որ ինքը սարքաղը պարտաւոր է հայթայթել ամէն տեղ եւ ամէն ժամանակ) : Հետեւաբար այն գաւառ կամ քաղաքը, որ զժառանգութիւն կուենայ ակամայ սարքաղների գոշուն մը հիւրընկալելու, աւարադութեան, կողոպուտի եւ բռնաբարութիւնների սանձարձակ ասպարէզ կը դառնայ :

Քաղաքային կամ գլխուգործական պաշտօնէութիւնը չէ միայն որ կը կառավարէ Պարսկաստան, այլ այդ երկրին ճակատագրական բաղդին գերազանցապէս իշխելու կանչուած է մուսուլմաններին մեծ մուշթիդը (կրօնապետ) իր բոլոր շէյխ, մուշթի, սէյիդ եւ ախուհ (տիրացու) պաշտօնակիցներով : (Սէյիդ Ալիի տոհմէն սերած մեծամեծ արտօնութիւններով մենաշնորհեալ մի գասակարգ է տասնեակ հազարներով, որի անդուստ մոլեռանդութիւնը յարաճուն խռովութիւնների բորբոքեալ մի հնոց է) :

Ձկան աշխիւ օրէնք և ոչ էլ դատարաններ, ամէն ինչ կրօնաւորների ձեռքն է, շէրիի օրէնքն է միայն իշխողը եւ մովսսական «ակն ընդ ական

եւ առամն ընդ տառման» կը թագաւորէ բացարձակապէս : Գոյերի, աւազակների, բռնաբարիչների քիթը, աւանջ կամ ձեռները, երբեմն էլ լիզուկ կը կտրուին անպատճառ, իսկ արեան փոխարէն անպայման արիւն պիտի թափուի, եթէ երբէք դատախազը թուամանների փայլունութիւնէն հրապուրուելով չկաշտառուի :

Ոճրագործը առնուազն երկու մուսուլմանների վկայութեամբ (ոչ մուսուլմաններինը ընդունելի չէ) մահուան կը դատապարտուի եւ որոշեալ օրը կառավարատի հրապարակը կը բերուի :

Որոշեալ ժամին ահագին բազմութիւն կը խռնուի այդ հրապարակին վրայ տխուր, զալկաղէմ, վերջին անգամ իր ընկերական պարտքը կատարելու, որով գուցէ կարենայ կեանք մը մահանալէ դադարեցնել :

Կրօնական, քաղաքային եւ գլխուգործական պաշտօնեաները կանգնած են խորհրդաւոր. մահապարտը ձեռներն ու ոտները չլթայապրկի, հրապարակը կը բերուի, որին կը հետեւի դահիճը դանակը ձեռքին արեանադոյն շորերով : Դատախազը ներկայ է արդէն, կրօնապետը եւ բարձրատիճան պաշտօնեաները, ինչպէս եւ բարեխիղճ մարդիկ, զայն համոզելու ճիգեր կ'անեն, արիւն արեամբ լուալու տեղ դրամով փոխարինել. շատ անգամ հազարաւոր թուամաններով հաղիւ կարելի է համաձայնութեան գալ : Այդ պարագային կը յայտարարուի ժողովուրդին իրաւախոհութիւնը եւ մահապարտի ազատութիւնը որոշեալ գումարով, որ պիտի հայթայթուի այնտեղ խռնուած բազմութենէն :

Կրօնաւոր մը յանցաւորին դատկը ձեռքին, քաղմութեան մէջ կը շրջի «արեան գին» տալու համար մուսուլմանների գլխարտութեան եւ զգացումների կոչում անելով : Որոշեալ գումարը ձեռք բերուելէն վերջ դատախազին կը տրուի, որ անիջապէս իր ձեռքով մահապարտի ձեռք ու ոտը կ'արձակէ չղթաներէն, զայն ազատ թողնելով : Հակառակ պարագային եթէ դատախազը չհամաձայնուի, դահիճը մատներ անցուցած երկու երկաթեայ կեռերը, մահապարտի ուռնգեր կ'անցունէ զանոնք եւ կրօնապետի օրհնած դանակով ոչխարի նման վիզը կը կտրէ եւ ապա գտակը ձեռքին ժողովրդէն «դանակի գին» կը հաւաքէ, որով ժողովուրդը քաւուած կը լինի այդ արարիւնէն իրենց մեղքէն :

Ոչ մուսուլմանների համար գլխատման եւ ո'ւեէ ֆիզիքական անդամատութեան օրէնք չկայ, այլ այդ ամէնը պէտք է փոխարինել դրամական տուգանքով : Քրիստոնէի մ'արիւնը այդ օրէնքով արժէ 30 թուման, իսկ հրէայի մը արիւնը՝ 7 թուման, այն էլ սեւ փող (փախր փարա) : Ուրախալի է տեսլ որ վերջին ժամանակների դատաւորները այդ օրէնքը զրեթէ մոռացութեան տըւած են, գուցէ արտաքին քաղաքականութիւնները նկատի ունենալով : Թէեւ քրիստոնէի մը կամ հրէի մը ըսպանիչը չեն գլխատեր, սակայն սարսափելի տանջանքներէն զատ մեծագումար տուգանքներով հաղիւ հազ կ'արձակեն :

Իրեն պետական բանտ, որոշ հաստատութիւններ չկան Պարսկաստանի մէջ. իւրաքանչիւր քաղաքի կամ գա-

ւառի մէջ մուշթիդի, դատաւորին, հմիւրն (գլխուգործական հրամանատար), քաղաքապետին, ֆալիխզար կամ սեւ-փեդեարն (քրիստոնեաների դատաւորներն) իրարմէ անկախ, ունին իրենց սեփական բանտային հաստատութիւնները, որոնց համար կը յատկացնեն իրենց վարձած պաշտօնեաների ստորերկրեայ մութ ու մռայլ չեռալիներ (նկուղ), ախոռները, երբեմն նոյն իսկ արանոցները, ուր թշուառ բանտարկեալ վիզ ու ձեռները չղթալակալ, ոտները կոճկներով ամրապնդած, օրերով անթիւ, անանախան համբերատարութեամբ կը սոկայ սարսափելի տանջանք ու չարաբանքներին եւ կը տանի փառաշնորհ անուր յիշոցներն ու նախատիւքները, երբ մահաւանդ ինքը բանտարկեալը աղքատ է և չի կարողանար օրական ծախս (խառաջ) վճարել անոնց : Ամէն բանտարկեալ պարտաւոր է իր ուտելիքի, վառելիքի եւ ճրագլոյսի ծախսերը հոգալէն զատ, ամենօրեայ պահապան փառաշնորհ օրական վարձն ալ վճարել («ո») :

Բանտարկեալ բանտ մոնալուն պէս այլ եւս տէր չէ իր վրայ գտնուած դրամին կամ ուեէ գոյքին, ինչպէս եւ շատ անգամ հանդերձներին ու նոյն իսկ կօշիկներին. այդ ամէնը փառաշնորհի հաշիւ իրաւունքն է, որոնք աստիճանի համաձայնութեամբ կը ըստեն մէջերնին : Հազուադէպ հանգամանքների տակ բանտարկեալ մը իր տարին կը բոլորէ բանտին մէջ. կաշառքով, ֆիզիքական ուեէ անդամատութեամբ կամ սարսափելի տանջանքների կրելով շուտով կարճակուր բանտէն :

լուրջ ուշադրութեանը ներկայաց-
նել: Պուշկար թերթեր երբ այս
պէս սկսին մեր ներքին զարոյցա-
կան խնդիրներով զբաղել, մեր
կրթական հաստատութիւններն
քննադատել ու ձաղկել, դժուար
չէ ըմբռնել թէ ինչ ծանրակշիռ
հետեւանքներու առիթ կրնան տալ:
Ուստի այդ հրատարակութեամբ
Պ. Սապահ-Գուլեանի վրայ ծան-
րացող ամբաստանութիւններն եւ
թէ թիւրիմացութեան արգիւնք
են պէտք է նոյն թերթով հերքել
տալ, իսկ եթէ իրողութիւններ են,
հարկ անհրաժեշտ է վաղ ընդօրոյթ
չարեանց պատճառը արմատախիլ
ընել:

ԱՂՔԱՏԱԽՆԱՄ

Տեղւոյս ազգայիններէն ոմանք գան-
գաւորներ կը յայտնեն Աղք. ընկերու-
թեան Գործ. Ժողովոյ անդամոց դէմ.
սոյն խնդրոյ առթիւ խմբագրութեանս
ուղղուած նամակի մը էական կէտերը
նորոգութեամբ ստորեւ կը հրատարա-
կենք, պատասխանատուութիւնը նա-
մակազրին թողով:

Ա. — Աղքատախնամ ընկերութեան
Պր. Ատենադպիրը՝ իր պաշտօնին գը-
լուխն անցածին պէս, իրեն աւագ պար-
տականութիւն համարած էր՝ ի հաշիւ
Աղք. ընկերութեան՝ հաց յատկացնել
իր երկու հոմանիւններուն զորս Պօլսէն
իր հետ բերած էր: Մենք, ժողովրդին
զաւակները, լաւ գիտակ այս իրադար-
ձութեան՝ քանիցս բողոքեցինք Պ. Ա.
տենապետին՝ որպէսզի դարման մը
խորհի իր պաշտօնակցին զեղծումին
դէմ: Պ. Ատենապետը թէեւ խոստացաւ
նկատողութեան առնել մեր բողոքը,
սակայն մենք զարմանքով տեսանք որ
Պր. Ատենադպիրը յաջողեցաւ Աղք.
ընկերութեան գոյութեան ամբողջ ըն-
թացքին մէջ՝ հացով կերակրել իր եր-
կու սիրանոյցները: Այսպէս, երկու
բարեկեցիկ եւ ո եւ է օգնութեան ան-
կարօտ կիներ միայն տտենադպիր մը
հոմանիւնները ըլլալուն համար՝ աղքատ-
ներու յատկացուած հացին արմատացան
այնքան երկար ատեն:

Բ. — Հացագործ մը, ի փոխարէն
պահանջը մը զոր ունէր Պր. Գ. Բ. ի
ճաշարանէն՝ իւրացուցած է արդիւնքը՝
250 դահեկան՝ այն տոմսերուն զորս
Աղք. ընկերութիւնը իրեն յանձնած էր,
աղքատներու ի նպաստ թատերական
ներկայացման մը առթիւ, ծախելու
համար: Արդ, թէեւ մենք ժամանակին,
այս մասին՝ Աղք. ընկերութեան զի-
տոգութիւն ըրած ենք, սակայն նա,
մինչեւ հիմա անփոյթ գտնուած է իր
պարտականութիւնը կատարելու պաշ-
տօնին մէջ:

Գ. — Վերոյիշեալ հացագործին քով,
կը մնայ նաեւ բաւական զրոյս՝ աղ-
քատներու յատուկ, զոր գանձելու հոգ
չէ ըրած ցարդ Աղք. ընկերութիւնը:

Դ. — Պր. Հաւաքիչը ունի իր մօտ
Աղք. ընկերութեան անուամբ հաւաք-
ուած գումար մը, զոր տակաւին չէ
յանձնած ընկերութեան:

Վերոյիշեալ չորս իրողութիւններուն
վրայ ձեր ուշադրութիւնը հրաւիրելով
կը սիրենք յուսալ թէ դուք, Տիար
Խմբագիր, պիտի բարեհաճիք Ձեր թեր-
թին մէջ, Աղք. ընկերութեան գոր-
ծառնութեանց եւ գործունէութեան
նկատմամբ վիճաբանութիւն մը արծար-
ծել, որմէ՝ կը յուսանք յառաջ գան
լոյսը պարզող ամէն մութ կէտեր: Ար-
դէն, Աղք. ընկերութեան Պր. Ատեն-

նապետը՝ ի ներկայութեան կարգ մը
անձերու՝ խոստովանած է մեր պատ-
մած իրողութիւններու ճշգրտութիւնը:
Ուրեմն, կը կարծենք թէ ան կը բա-
րեհաճի նաեւ պաշտօնապէս եւ հրա-
պարակաւ պատասխանել մեր հարցե-
րուն:

Ընդունեցէք, Տիար Խմբագիր, մեր
բարձր համարմանց անկեղծ հաւատքին:

Թորոս Փօլասեան

Վառնա, 30 Յուլիս 98.

ԸՆԴՀ. ՀԱՇՈՒՆԿԵՐՈՒ
ԲՆԹԵՐԱՍԻՐԱՅ ԲՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
Ս Ի Լ Ի Ս Տ Ի Ի

Սկսեալ ի 1 Փետր. մինչ 1 Յուլիս 1890

ՄՈՒՏՔ	Ֆր. Մն.
Փետր. 1 — Հին հաշուէն պատ-	
րաստ դրամ 25.40	
» 1/28 — Չանազան հասոյթ	62.10
Մարտ 1/28 — Բաժանորդներէ եւ	
գանձանակէ հասոյթ 37	
Ապրիլ 1/25 — » » » »	65.40
Մայիս 1/30 — » » » »	68.70
Յունիս 1/30 — » » » »	42.70
	301.30

Ե Լ Ք Ֆր. Մն.

Փետր. 1/28 — Վարձքի, պաշտօնէի	
եւ գանազանաց վճար. 98.05	
Մարտ 1/30 — » » » »	44.65
Ապրիլ 1/30 — » » » »	24.15
Մայիս 1/31 — » » » »	38.05
Յունիս 1/31 — » » » »	22

Փետր. 1 — Էն մինչեւ Յուլիս 1

գրքի ու լրագրի վճար. 55.05	
	281.95
Գանձապետի մօտ պատրաստ գր.	19.35

301.30

Ի դիմաց Գործ. Ժողովոյ Ընթ. Ընկ.
Հայոց Սիլիսիի
ԱՏԵՆԱԳԻՐ ԱՏԵՆԱՊԵՏ
Գ. Աղաւեսեան Դ. Պ. Նահապետեան
ԳԱՆՁԱՊԵՏ
Յ. Սիւրնուեան

Լ Ր Ա Ք Ա Ղ

Մեր արդէն ծանուցած Ալիսարն
չաբաթաթերթին 1 եւ 2 թիւերը
լոյս տեսան. մենք ողջունելով այս
նորածինը, կը յանձնարարենք
հասարակութեան զգուանաց:

— Օտեւ. լիւտ. թերթը Պարս-
կաստանի մասին գրուած իր մէկ
բանասիրականով ցոյց կուտայ թէ՝
այժմ Պարսկաստան 36 նահանգ-
ներու կը բաժնուի 1,600,000 քա-
ռակուսի մղոն տարածութեամբ,
ամբողջ բնակիչը 9 միլիոն կը հաշ-
ուուի, որոյ 2,600,000ը թափա-
ռական ցեղեր են:

— Խումբ մը ռուս բնագէտներ
ճանքայ ելած են դէպի Չինաստանէ
նոր գրառուած Բորթ-Արթիւր եւ
Թալիէնովան նաւահանգիստներն,
բնութիւնը եւ տեղական հանքային
հարստութիւններն ուսումնասիրե-
լու նպատակաւ:

— Չինաստանի մէջ երկար ա.
տէնէ ի վեր յեղափոխութիւն սկը-
սած է: Երկրին մէջ մեծ կազմա-
կերպութիւն մը կը պատրաստուի
երկնային կայսրութեան գահը տա-
պալելու եւ հասարակապետութիւն
հիմնելու նպատակաւ: Այս կազ-

մակերպութեան աջակից են Եւրո-
պայի եւ Ամերիկայի մէջ գտնուած
չափ մը ազգեցիկ եւ ուսեալ Չի-
նաստանցիներ: Անցեալ շաբթու
մեծ խռովութիւններ տեղի ունե-
ցան Վու.Ջո նահանգին մէջ, ուր
չուրջ 1500 զօրքեր ջարդուած են:
Նոր-Դարի մէջ կը կարգաւոր հետեւ-
եալները:

Ս. ԷՋՄԻՍՏԵՆԻՅ. — Նորերս այստեղ
հասան եւրոպացի դիտնականներ՝ դոկ.
Վայդլիմար եւ Բելի ու Ջէյլլից եղբայր-
ներ, որոնք պէտք է գիտնականորէն
ուսումնասիրեն մեր արքավայրերը: Գը-
նալու են նաեւ Անի, այնտեղի հնու-
թիւնները դիտելու, որտեղից նրանք
կ'անցնեն Տաճկա-Հայաստան:

— Տեղս եկաւ եւ մի քանի դիւրի օ-
թուանց նաեւ Վանի Ամերիկեան մի-
միսիոնար, որի ասելով Վանի ներկայ
գրութիւնը լաւ է:

— Ներկայումս Ս. Էյմիսիոնում 70-80
չափ հայ գաղթականներ կան Վանի եւ
Ալաշկերտի կողմերից, որոնցից առողջ-
ներն աշխատում են Էյմիսիոնայ նոր
շինութիւնների վրայ եւ ստանում են
իրենց օրավարձը, իսկ անկարողները
կերակրում են Վանքի հաշուով: Քանի
օրերը տաք են Վան. Հայրապետը աշ-
խատում է գաղթականներին հայրենիք
վերադարձնել: Ճրտերն ընկնելու դէպ-
քում գաղթականների վերադարձի գոր-
ծը դժուարանալու է:

— Ռուսիայի սովետներին օգնող
մասնաժողովը ապրիլ 22 ի գրութեամբ
խնդում է Ս. Էյմիսիոնի Սինոդից օժան-
դակել իրեն դրամական նպաստներ ժո-
ղովելու գործում եւ ցոյց տալ, թէ որ-
տեղի հայ ժողովուրդը օգնութեան կա-
րիք ունի: Սինոդը «Արարատ»-ի ասե-
լով, վճռեց պատուիրել Ռուսիայի Կոն-
սիստորիաններին, որ հրաւեր կարդան
հայ ժողովրդեան օգնելու անբերրու-
թիւնից շնորհած Ռուսիայի ազգա-
բնակչութեան եւ հանգանակած դուժար-
ներն ուղարկեն նշանակալ հասցէին՝
նրանց քանակութեան մասին տեղեկու-
թիւն տալով Սինոդին:

Առաւառ հանդէսի մէջ հրատարակ-
ուած է հետեւեալ ծանուցումը.

«Ծննդարանում առաջիկայ ուսումն-
նական տարւոյ համար աշակերտաց ըն-
դունելութիւնը կը սկսուի սեպտ. 1-ին:
Այս տարի գիշերօթիկ աշակերտների
ընդհ. թիւն էր 183, որոնցից 22-ի
համար միայն թոշակ կամ դրամ նպաստ
էր վճարուում. ձրթաթոշակ էին ուրեմն
161 աշ.: Առաջիկայ տարին եւս ձե-
մարանը չի կարող ունենալ աւելի քան
160 ձրթաթոշակ: Այս կարգի նախկին
սաներից սեպտեմբերին հազիւ միայն
25 հոգի պակասած կը լինին՝ յոյն չա-
փով տեղեր բացուած նորերի համար.
պէտք է ի նկատի ունենալ ուրեմն, որ
վարչութիւնը խիստ ընտրութիւն կանէ
քննութեան ներկայացողների մէջ եւ
կ'աշխատէ միայն ամենաընդունակնե-
րին ընդունելու: Աշակերտներ կ'ընդուն-
ուին, սակաւ բացառութեամբ, Գ. եւ
Դ. դասարանների համար: Քննութեան
ծրագիրը եւ ընդունելութեան կանոն-
ները մնում են նոյնը, ինչ որ նախըն-
թաց տարիներում»:

ՄԵՔԹԵՊԼԵՐԻՄԻՁ
Ի Ո Ւ Ս Ի Ս Տ Ա

Բուսիտա մէքթէպլէրիմիզ էլ-
տէն կիթմիշ տիր: Բուս հիւքիւ-
մէթի անլէրի իրատ վէ միւլքէ-
րի իլէ պէրապէր տօղրուտան տօղ-
րու բէնտի թահթը իտարէսինէ

ալմըշ տըր: Շու թէսիւֆէնճամ
հավատիսի կէչէն հաֆթա տախի
եազմըշ տըր վէ պու մուհիմ մէ-
սէլէնին թաֆսիլաթընը թիֆլիս
կազէթալարընտան պէքլէմէքտէ
իտի իսէքտէ, պու կիւնէ գատար
մէղքիւր կազէթալար ապա թաֆ-
սիլաթա կիւրիշէմէյուպ, եալընըզ
մէսէլէի էհէմմիյէթսիզէ թէլազ-
զը իթմէքտէ տիրէր: հէր հալ-
տէ պուտէ մէճպուրիյէթ թահ-
թընտա օլաճագ տըր:

Բիւզգանդիոնըն պու պապուս ալ-
մըշ օլտըզը մալիւմաթա պինաէն,
կապկասիատա բեաին մէքթէպլէ-
րիմիզտէն 240 մէքթէպլէ 30,000
էրքէկ վէ զըզ շակիրտան վէ 1200
վարժապետ վէ վարժուհիլէրլէ պէ-
րապէր Բուս Մէարիֆ Նէզարէ-
թինէ թէսիլմ օլընմըշլար տըր:
պուտան մաատա, մէղքիւր մէք-
թէպլէրին իտարէսինէ մախուս,
իլի միլիոն բուպլի, եանի 5 միւ-
հոն ֆրանզ գըլմէթինտէ օլան
միւլքէրի տախի բուս հիւքիւմէ-
թի զապթ իթմիշ տիր:

Բուս հիւքիւմէթի պիլմէյիզ
հանկը ինսանիյէթ նօգթաի նա-
զարընտան հուգուզը միլիյէմիզէ
պու եօլտա թէճալիզաթտա պու-
լընըյօր: էկէր մէքթէպլէրին լի-
սանը բէսմիսի բուսճա եազմագ
էֆքեարը իլէ իտի իսէ, օլէֆքեա-
րը պիւր գաշ սէնէտէն պէրու իճ-
րա իթմիշ տիր, էօյլէքի պուկիւն
Բուսիանըն հէր գըթասընտա պու-
լընան միլլէթտաշլարըմըզ Բուսլար-
տան էյի բուսճա պիլիլէր: Կէչէն
սէնէ մէքթէպլէրիմիզին էքսէրի-
սինի գաբաթտը, նէ իսէ՝ ֆա-
գաթ շիմտիտէ չըգուպ, անլէրի
էշեալարը վէ միւլքէրի իլէ պէ-
րապէր զապթ իթմէք նէ՝ ինսա-
նիյէթէ, նէ մէտէնիյէթէ վէ նէ-
տէ էտէպէ եազըշըր հալլէրտէն
տէկիլ տիր:

Մէսուրիմիզէ կէօրէ, պու մէ-
սէլէ հազգընտա եազմագ Բուսիա-
տա չըգան էրմէնիճէ կազէթալա-
րընա մէնն օլընմըշ տըր:

Վէ կէօրիւնիւշէ պինաէն, վեհ
կաթողիկոս սիւքիւտտէն մաատա
հիշ պիր թէչէպպիւսաթա սէր-
պէսթ տէյիլ տիր: Ֆագաթ միլ-
լէթ Հայրիկի եալընըզ մանասլըր
պէքճիսի օլմագ իշիւն կաթողի-
կոս ինթիխապ իթմէմիշ իտի,
բէնտիսի իւզէրինտէ միլլէթին
պէօյիւք պէօյիւք իւմիտէրի վար
ըտը, սիւքիւտտէ մէքթէպլէրի վէ
միւլքէրի էլտէն չըգարան եալըն-
տէ քիլիսէ վէ մանաստըլարը էլ-
տէն չըգարա պիլիլ վէ նիհայէթ
միլլէթիտէ . . . :

Հայրիկ մուէսիր վէ եիւքսէք
սէտասը իլէ միլլէթին պու հու-
գուզընը եա մուհաֆաղա իթմէլի
վէ եախօտ իզթիտարտան աճիզ
օլտըզընը միլլէթէ իթիւրաֆ էյլէ-
մէլի տիր:

ՎԻՆԻՆԻՍԻՆ ԵՕԼԱՐԱՐՆԵՐ

Պերլենտեն ալաֆրանկա օգոստոս 6 թարիխի բնիտե օլընան պիր թէլէկրաֆ իմբէրաթօր վիլհելմ Իքինճինին զէվճէսի իլէ պէրապէր Շարգա վէ Երուսաղէմէ իտէճէկի հօլճըլըլընը պէր վէճէկի աթի պիլտիրիօր :

Իմբէրաթօր վէ զէվճէսի հոկտ. 19տէ հօլա չըգաճագլար . վէնն. տիկտէն վարօրա ըագիպէն՝ Աթի. նայա ուղրամագսըլըն Սթանպօ. լա կիտէճէկի Երուսաղէմէ :

Սթանպօլտան Պուգրէշ Գէօս. թէնճէ թարիգի իլէ Սինաիայա կիտուպ , պիր գաշ կիւն Բուճա. նիա գրալ ու գրալիցասընա մի. սաթիր օլաճագլար :

Պիլախէրէ թէքրար Սթանպօ. լա կէլուպ , 22 տէ վարօրա ըագի. պէն Հաիֆայա (Արապիսթան) չը. գաճագ վէ գարատան կիսարիա. տա վէ Երաֆատա գօնագ իտէրէք Երուսաղէմէ կիտէճէկ տիր : Իշ. պու հօլճըլըգտա իմբէրաթօր սէյ. հաշ էլպիսէսի լապիս օլուպ , հա. լընըլ Երուսաղէմէ տաքէրի ֆօր. մա կէլէճէկ տիր :

Իմբէրաթօր վէ զէվճէսի Երու. սաղէմտէն ալտէթլէրինտէ, նոյեմ. բեր էվալիինտէ Մըպրա կիտէ. ճէքէր տիր : Գահիրէտէ անլէրի գապուլ իթմէք իշիւն լաղըմ կէ. լէն տաիրէնին թէրթիպ օլընմա. սընը խըտիվ էմը իթմիշ տիր :

ՄՈՒՀԱՐԵՊԷ

Վաշինկթօնտան Յուլիս 28 թա. ըիւլի չէքիլէն պիր թէլէկրաֆ՝ միւսալէհէ չէրաիթի իշիւն Սպա. նիանըն ճէվապընը Մ. Գամպօն գապուլ իթմիշ օլտըլընը պիլտիր. տի : Պու ճէվապնամէ բէք ուղուճ վէ չիֆրա հաղըմըլ տըր :

Սանթիակօտան ալընան խապէրէ կէօրէ, Գուպալըլարըն ըէյիսի կար. սիա 1200 Գուպալը իլէ սէրկէրտէ կօմէղին/հանընա, չէքիլմիշ վէ հէ. նիտէն գապկալա մուպաշէրէթ իթ. մէք թէքիլի իտէճէկ իմիշ :

Գուպալըլարա օթօնօմի վէրմէք իսթէմէյէն ժէնէրալ Շաֆթէրէ գարըլ կարսիա բրօթէսթ վէ չի. քեալէթ իթմէքտէ տիր :

Էկէր Սպանիանըն ճէվապընտան Ամէրիգա խօշնուտ գալմալ իսէ. Սպանիա գապիլնէսի մէսէլէի մէճ. լիսի մէպուսանըն ըէյինէ իհալէ իթմէկէ մէճպուր օլաճագ տըր. զիրա մէմալիբին պիր գըսմընը, հանի առալարը թէք իթմէք ի. չիւն հէր հալտէ մէպուսարըն ըէ. յինէ միւրաճաթ իթմէք նիգա. մընտան տըր :

ՄԻԻԹԷՆԵՎ ՎԻԷ

—Յէլմ. Բրէնս հաղրէթլէրի Յուլիս 26 տա Անթիվաիէ (Գարա. տաղ) իէթիշտի, Բրէնս Տանիօ անը գապուլ իտուպ , պէրապէր Չէթի.

նէյէ կիթտիլէր . էհալի հէր թա. ըաֆտա հուրալար վէ մէսէրէթ սէտալարը իլէ Բրէնսի գարըլարա : —Պագուտա նէֆթ անպարլա. ընտան սէքիլի հաւտը . հանկըն. տա պիր միլիօն բուլթ նէֆթ թէ. լէֆ օլմուշ վէ 14 քիշի էօլմիւշ տիր :

—200 արնավուտ վէ 60 թիւրք տաքէրէրին Սըրպիա սինօրընը կէշուպ , իճրաի հաշարաթ իթմիշ օլմալարընտան տօլարը Մ. Մօ. գօվիլին Պապը Ալիէ գարըլ չէ. տիտ բրօթէսթ իթմիշ օլմալար իւ. զէրինէ, տէօրթ տէվլէթլէր Մ. Մօգօվիլին բարօրթընը թէտգըգ իտէյօրլար :

—Մալիւմ օլտըլը իւղրէ պիր վաղըթ տիւննալի վէ բուհանի հէր իքի գուվլէթլէրի քէնտի հէտինտէ թուլթմըլ վէ աղըլարճա պիլթիւն էվրօթա միլլէթլէրինի զաւոր ու ճէհալէթ բէնչէսի ալթընտա էվմիշ օլան Բաբալարըն թէէսիլինի ի. թալիա հիւքիւմէթի կիւն պէ կիւն գըրմաղտա տըր : Ասիլին տէ մէք. թէպլէրին բուհանի տէրսլէրի վէ քէգա բուհանի կաղէթալարըն նէշ. ըրիաթընը, պաղը շարթլարլա սը. գըշտըրմըլ օլան հէնի նիգալարա գարըլ Բաբա բրօթէսթ իթմէքտէ տիր : պու մագսէտէ մէպնի եպիս. կոպուլարա վէ էհալիէ խիթապ Բաբանըն պիր կոնգալընը Օսէր. վաթօր Գօնալիւ նամ կաղէթա նէշը իթմիշ տիր :

—Սերպիատաքի բուս էլիսի Մ. Յատուքի պիր գաշ հաֆթա. լարտան պէրու մէմուլիլթինի միւնհալ պըրագմըլ օլարագ Սեր. պիտան տըլարը չըգմըլ տըր : Մէրգուլ էլի հիւքիւմէթինէ միւ. բաճաթ իտէրէք, սապըգ Սըրպ գըրալը Միլան Սերպիատա պու. լընտըգճա քէնտիսի մահէլի մէ. մուրիլթինէ կէշմէք իսթէմէտի կինի արլէ, ուղուճ պիր միւտտէթ իշիւն Պիլկրատա ալտէթ իթմէ. մէսինէ միւսատէ իսթէմիշ տիր : Բուս հիւքիւմէթի էլիլին պու. թէքիլիլինէ բաղմէն զալըլ մուա. յէն պիր վաղըթ իշիւն մէմուրի. յէթի պաղընա կէշմէմէսինէ իղին վէրմիշ վէ տիկէր թարաֆտան Պիլ. կըրատա պուլընան բուս սէֆա. ըէթի սէր թէրճիւմանըն թալի. մաթ վէրուպ , Գրալ Միլանըն Սեր. պիտան տըլարը չըգարըլմասընը թալէպ իթմիշ տիր , զիրա Մի. լան միւթէվէֆա Չար Ալէքսանտ. ըա վատ իթմիշ օլտըլը իւղրէ՝ պիր տահա Սերպիա թօրաղընա տայագ պասմայաճագ ըմըլ :

—Թաւտա պա թաֆսիլաթ եա. զըլտըլը իւղրէ, Պապը Ալի կի. ըիտէ տաքէր հօլլամտգ խուսու. սընտա էլիլիլէրէ վէրմիշ օլտըլը նօթալարըն պիրէր նօսիլէրինի տալի տէվլէթլէր նէգալիտէ պու. լընան քէնտի էլիլիլէրինէ հօլլամըլ տըր : Պու նօթալարըն թիւրք հիւ. քիւմէթի տէմէք իսթէյօրքի, կի. ըիտտէ պուլընան թիւրք տաքէր. լէրին միւտտէթի տաքէրիլէսի

պիլթմիշ օլտըլընտան անլէրին հէ. ըինէ հէնի տաքէրլէր հօլլամագ նի. զալընտան օլուպ , պու հաղըլըլ. չը իսթիմալ իթմէքտէն պիլի մէն իթմէկէ տէվլէթլէրին հաղըլը. հօգ. տըր :

—Կիլիսին հէնի թէշքիլաթը իշիւն լաղմ կէլէն մէսարիֆէ կէօմ. քիւք հաղըլաթը իտարէ իթմէյէ. ճէկինտէն պահալէ՝ ամիրալար տէվ. տէթլէրէ միւրաճաթ իտուպ , ա. տանըն կէօմիւք իտարէսինի բէն. տիլէրին զապլը թաշիլընա ալ. մագ թէքիլիլինտէ պուլընմըլար :

—Շու սըրա բուս վէ թիւրք կաղէթալարը պէնլէրինտէ միւճա. տէլէ աղըլըլ տըր :

Նօլօէ վրէմիա նամ նիմ բէսմի բուս կաղէթալար Սթանպօլըն Մա. յիւմաթ վէ Մէրվիք նամ թիւրք ճէրիտէլէրլէ չէտիտ միւճատէլէյէ թուլթուլմըլ օլմաղլէ , միւպատէլէ օլընտան տարալէլէր տօղրուտան տօղ. ըու Սուլթանա վէ բուս հիւքիւ. մէթինէ խիթապ վէ պիլգէտէ է. հէմիլիլթի տիր : Պու պապտէ Թաւնըն նէշը իթմիլի պիր պէն. տի մալսուստան պաղը էն էհէ. միլիլթի ֆըգրալարը չարշանպա կիւնիւ չըգարաճաղըմըլ նիւսիտէ տէրճ իտէճէկիլ . զիրա պու տէ. ֆա եէրիմիլին միւսատէսի հօգ. ըտը :

ՍՕՆ ՀԱՎ ԱՏԻՍԱԹ

—Եւմէնտէն կէլէն սօն հալա. տիսաթ՝ օլ ճիվարտա վէ պիլթիւն Արապիսթանտա ըսեան բէք գուվ. վէթլէշմիշ օլտըլընը պիլտիրիօր. Պապը Ալի օ թարաֆա հէնի տա. քէր վէ լէվաղիմաթ հօլլամըլ տըր :

—Ֆէլս. Բրէնս հաղրէթլէրի Չէթինտէ Բրէնս նիքօլտան սէմիմանէ գապուլ օլընմըլ, վէ բէ. չիտէ օլընան զիաֆէթտէ թարա. ֆէյն հէր իքի միլլէթին վէ հիւ. քիւմտարըն պալիլիլիւրըլը ու սատտէթի իշիւն իտարէի ագտահ իթմիլիլէր տիր . Բրէնս Նիքօլա էն էվմիշ Չար հաղրէթլէրինին իղալ ու չէրէֆի նամընա պատէսինի նուշ իթմիշ :

Պիր չօգ էվրագը հալատիլն պէյանաթընա կէօրէ , իքի Բրէնս. լէր պիր ահանամէ իմգալալաճագ. լար ըմըլ, պուտէ Միլանըն Սեր. պիտա կէլմէսի սէպէպլէ Պալգան. տա գարըլըլըլ գուհուր իտէպի. լէճէկինէ աթֆ օլընըլօր :

—Ալէրիատա թէքրար Եահու. տիլէր վէ պուլըլարա խասիմ օլան. լար պէյնիլտէ գալկալար վուգու. պուլուպ , ըվօլվէրլէր տալի իս. թիմալ օլընմըլ իսէտէ , էօլէն օլ. մամըլ վէ պաղըլարը տէրտէսթ օլընմըլար տըր :

—Ամէրիգալըլար թէքիլիլ իթմիք. լէրի շարթլարըն հիշ պիրինտէն վաղ կէշմէյէճէքլէր , վէ էկէր Սպա. նիանըն վէրմիշ օլտըլը ճէվապտան մէմուլն գալմաղար իսէ ժէնէրալ Սաթսօնա տօնանմալ իլէ Սպա.

նիայա կիթմէսի իշիւն էմը վէրի. լէճէք իմիշ :

—Ժէնէրալ Միլ պա իլէլկրաֆ պիլտիրիլ տիր քի մայլթիլտէ պուլընտան տաքէրլէր Բօրթօ Բի. կօյը ֆէթճ իթմէկէ քեաֆի տիր, վէ եէնիտէն հարտըմ կէօնտէրմէ. նին լիւղուճ հմգ տէմիշ տիր :

—Մանիլատան Սպանիօլար իքի տէֆա Ամէրիգալըլարըն օրտու. կեհաշ իւղէրինէ հիւճու իթմիշ. լէր իսէ տէ , հէր տէֆալընտա կէրի չէքիլմէկէ մէճպուր օլմըլար . պու գալկալարտա Սպանիօլարտան 20(1) էօլիւ վէ 300 հարէլի տիւշմիւշ, Ամէրիգալըլարտան 9 էօլիւ վէ 14 հարէլի : Ասըլար պու գալկալարա տալա գարըլմամըլար :

ՆԱԹԱՆ ՊԷՅ ԱՄԻՐԱՆԵԱՆՑ

Մ Ի Ի Ն Խ Ե Ն Ի
Թագաւորական Ալադէմիայէն
Վիպոյոնաճ

Կուտայ գաշնամուրի և ուրիշ նուագարաններու և երգի դասեր թէ գործնական թէ տեսականը, նաեւ Երաժշտութեան պատմու. թիւն :

Հասցեն Պատ. Ամիրխանեանցի բնակարանը :

ՉԱԽԻՐԷ ԲԻԱՑԱՍԸ

Վաւընա 1 Աղլարսու
Պոշոյոնայ
Վալօն հօգ ,
Արապա , լիպրա 55-60 հէքթօլ.
8. 40-10. 20 ֆրանք
Արքա եւնի
Լիպրա 42-50, հէքթօլ. 5-5. 50 ֆր.
Յաւաշէս
100 օգգասը 30-35 ֆրանք միայ
կէօրէ
Եաշաֆ
Արապա 1-2 ֆիլաթ 3.80-4 ֆր.
Տարր
Արապա 1-2 լիպրա 58-60 ֆիլ.
7-7.50.
Կիւնտէ 20-25 արապա պուղ. տայ, 30-40 արապա արքա կէլմէր. տէ տիր , Մըսըր հօգ տըր.
Արապա մուսալէսի՝ Նաթօլէն 24 ֆր. հիսապը իլէ տիր .

ՏՊԱՐԱՆ
ԲՐԱԴՈՒՆԻՔ, ԼՐԱԳՐՈՅ
Լրագրիս վերջին երեսի սիւ. նակներուն մէջ օտար լիզուներով ալ ազդեր կը գետնգուլին : Ա. Լանճին կը տպագրուին գրքեր, տետրակներ ու կը պատրաստուին հայերէն, պուլկարերէն, ֆրան. սերէն եւ յունարեն լիզուներով ընկալագրեր , հասցէներ, հար. սանեաց եւ ալլ հրաւիրագրեր, այցաքարտ եւ ալլն :
ԳՆԵՐ ՉԱՓԱՆՈՐ
Փափագողը պարտին դիմել խըմ. բազրուլթեան հասցէին :